ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք,

ՀՀ, Լոռու մարզ, գ. Սարահարթ,

03..դեկտեմբեր. 2018թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ձեզ եմ ներկայացնում Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու թիվ 27, 28,29, 30, 31, 32, 33 որոշումները, համայնքի ղեկավարի թիվ 21, 22 կարգադրությունները, համայնքի ղեկավարի թիվ 29 որոշումը և ավագանու 07 նոյեմբերի 2018թ-ի թիվ 26 ճշտված որոշումը:

Առդիր՝ 22 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,

29.նոյեմբերի. 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ 27

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29_Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, առաջնորդվելով սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ մասի 17 կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել սարահարթ համայնքի ավագանու 2018թ նոյեմբերի 29-ի նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթի միջնակարգ դպրոցը Սուրեն Փիլոսյանի անունով անվանակոչության մասին

Սարահարթ համայնքի սեփականության 2018թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող եվ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի

աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ գյուղական համայնքում 2019թ համար տեղական տուրքերի եվ վճարների տեսակները, դրույքաչափերը սահմանելու մասին

Համայնքային ծառայության մրցույթային եվ ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական եվ անհատական կազմը հաստատելու մասին

Հի լոռու մարզի Սարահարթ համայնքի 06-097- 001-001 ծածկագրի տակ գտնվող 0.02հա մրցույթով վարձակալության տալու մասին

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Բարիկյան Հարություն			
Սահակյան Լյովա			
Քոթանջյան Վազգեն			
Բարիկյան Վահան			

Սարահարթ համայնքի ղեկավար՝ /Ա. Փիլոյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,

29.նոյեմբերի. 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ 28

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2018Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով Սարահարթ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սարահարթ համայնքի սեփականության 2018թ-ի գույքագրման փաստաթղթերը ՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Բարիկյան Հարություն			
Սահակյան Լյովա			
Քոթանջյան Վազգեն			
Բարիկյան Վահան			

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

Հավելված

Սարահարթ համայնքի ավագանու

2018թ նոյենբերի 29-ի թիվ 28 որոշման

ՔԱՂՎԱԾՔ

Սարահարթ համայնքի համայնքային սեփականության գույքի գույքագրման փաստաթղթերից

հ. հ	Ապրանքանյութական արժեքների անվանումը	չափի միավ.	գինը	փաստացի կանխիկ		Հաշվ. Հաշվ տվյալներ	
				քանակ	գումար	քանակ	գումար
1	գրասենյակի շենք	1	նվիրատվ.	1		1	
2	ջեռուցման համակ.	1	նվիրատվ.	1		1	
3	համակարգիչ(Դելլ)	1	նվիրատվ.	3		3	
4	սքաներ	1	նվիրատվ.	1		1	
5	պրինտեր	1	Նվիրատվ.	1		1	
6	Գրասեն. սեղան	1	280000	1	280000	1	280000
7	Գրասեն.սեղան	1	45833	4	220000	4	220000
8	Գրասեն. պահարան	1	54166	4	260000	4	260000
9	կաշվեպատ բազկաթ.	1	130000	1	130000	1	130000
10	աթոռ կտորապատ	1	12500	7	105000	7	105000
11	համակարգիչ	1	160000	1	160000	1	160000
12	մոնիտոր	1	58000	1	58000	1	58000
13	տպիչ	1	102500	1	102500	1	102500
14	հոսանքի կարգավորիչ	1	22000	1	22000	1	22000
15	ստեղնաշար	1	6000	1	6000	1	6000
16	դինամիկ	1	5000	1	5000	1	5000
17	մկնիկ	1	3000	1	3000	1	3000
18	քարթրիջ	1	38000	1	38000	1	38000
19	ֆլեշ հիշողություն	1	5500	1	5500	1	5500
20	ԳԱԶ 3110	1	2200000	1	2200000	1	2200000
21	տրակտոր դ5-75	1	575000	1	575000	1	575000
22	կոմբայն ՍՑ-5	1	415000	1	415000	1	415000
23	սեղան	1	28500	4	114000	4	114000
24	սեղան դիմադիր	1	120000	1	120000	1	120000
25	Աթոռներ	1	12500	12	150000	12	150000
26	Վոլսվագեն տուարեկ	1	6588000	1	6588000	1	6588000
27	Հեռուստացույց	1	220000	1	220000	1	220000
28	Հեռուստացույցի տակդ.	1	130000	1	130000	1	130000
29	Բազկաթոռ օֆիսային	1	50000	2	100000	2	100000
30	Աթոռ պաստառապ.	1	25000	14	350000	14	350000
31	աղբարկղ	1	նվիրատվ	17		17	

32	աղբարկղ	1	40000	4	160000	4	160000
33	թենիս	1	60000	1	60000	1	60000
34	գրասենյակային աթոռ	1	5000	60	300000	60	300000
35	Փողոցների լուս. համ.	1	300000	1	300000		300000
36	Խողովակ ֆ50	1	1665	600մ	999000	600մ	999000

Հանձնաժողովի նախագահ՝ Արտյոմ Փիլոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գնել կասեմյան

Սիլվարդ Գևորգյան

Տաթևիկ Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,

29.նոյեմբերի. 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ 29

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող եվ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը:

2.Ուժը կորցրած ճանաչել Սարահարթ համայնքի ավագանու 2015թ հուլիսի 01-ի թիվ 10 որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Բարիկյան Հարություն			
Սահակյան Լյովա			
Քոթանջյան Վազգեն			
Բարիկյան Վահան			

Սարահարթ համայնքի ղեկավար՝ /Ա. Փիլոյան/

Հավելված

Սարահարթի համայնքապետարանի

Ավագանու 29.11.2018. N 29 որոշման

Սարահարթի համայնքապետարանի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը 9(ինն)
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Պաշտոնային դրույքաչափերը (հազար դրամ)
1	Համայնքի ղեկավար	1	260.0
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	117.0
3	Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար	1	120.0
4	Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ	1	115.0
5	Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ	1	115.0
6	Գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	1	113.0
7	Գյուղապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ	1	87.0
	ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
8	Գործավար	1	86.0
9	Հավաքարար	1	75.0
	Ընդամենը		1088.0

Սարահարթ համայնքի ղեկավար՝ /Ա. Փիլոյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,

29.նոյեմբերի. 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ 30-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019Թ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով ,<<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի2-րդ մասով

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքում 2019թ համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Արդարադատության նախարարություն `պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Բարիկյան Հարություն			
Սահակյան Լյովա			
Քոթանջյան Վազգեն			
Բարիկյան Վահան			

Սարահարթ համայնքի ղեկավար /Ա. Փիլոյան/

Հավելված՝

ՀՀ Լոռու մարզի Սարահարթի համայնքի

Ավագանու 2018թ նոյեմբերի 29-ի 30 որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019Թ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

ա.հիմնական շենքերի ու շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝չորս հազար հինգ հարյուր դրամ:

բ.սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հազար դրամ

-500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ

-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսան հազար դրամ

-3000-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝երեսուն հազար դրամ

գ.ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հարյուր դրամ

-20-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2)համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների) (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ:

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ;

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ:

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ:

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տասնութ հազար դրամ:

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վեց հազար դրամ:

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տասնհինգ հազար դրամ:

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ:
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հինգ հարյուր դրամ:
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ:
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ:
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար դրամ:
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ:
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար հինգ հարյուր դրամ:
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ:
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար դրամ:
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար դրամ:

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ հարյուր հինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ երկու հազար հազար դրամ:

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ ութ հարյուր հազար:

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ վաթսուն հազար դրամ:

դ. խաղատների համար՝ մեկ հարյուր հիսուն հազար:

ե. շահումով խաղերի համար՝ յոթանասունհինգ հազար դրամ:

զ. վիճակախաղերի համար՝ երեսուն հազար դրամ:

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ:

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հարյուր դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հարյուր դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հարյուր դրամ:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար երեք հարյուր դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ:

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ վեց հարյուր դրամ:

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հիսուն դրամ

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ չորս հարյուր հիսուն դրամ:

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ:

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ երեք հազար դրամ:

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ հարյուր հիսուն հազար դրամ:

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ:

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն մեկ հարյուր հազար դրամ:

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն դրամ:

2. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել քսան հազար դրամ:.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը,

արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երկու հազար դրամ:

3)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել ինը հարյուր դրամ:

4)համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երկու հազար դրամ:

5)համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

6)համայնքի կողմից ֆիզիկական անձանց համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել մեկ հարյուր դրամ մեկ ամսվա համար:

6.1 համայնքի տարածքում գործող իրավաբանական անձանց և տնտեսվարող սուբյեկտների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել մեկ քառակուսի մետրի համար.

ա/ առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 30դ

գ/արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ 5դ

դ/ կրթական, մշակույթային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ՝ 2դ

7)ոռոգման ջրի մատակարարման համար՝ տաս հազար դրամ մեկ հեկտարի համար:

8)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար սահմանել մեկ հարյուր դրամ:

9)համայնքը ապասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց սահմանել հետևյալ վճարները

	Անասնաբուժական ծառայության անվանումը	Գինը /դրամ/
1	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն	**500-1000**
2	Ծննդօգնություն 1. թեթև միջամտություն 2. ծանր միջամտություն	 **1000-2000** **5000-20000**

3	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)	Մանր կենդանի **100-200** Խոշոր կենդանի **200-500**
4	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար	**200-1000**
5	Ախտահանություն	1 քառ. մետր **200-300**
6	Միջատազերծում (դեզինսեկցիա)	1 քառ. մետր **100-200**
7	Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)	1 քառ. մետր **200**
8	Արհեստական սերմնավորում	**5000 - 7200**
10	Կենդանու հերձում	մանր կենդանի **1000** խոշոր կենդանի **3000**
11	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից	Յուրաքանչյուր այցելությունը **1000-2000**
12	Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից	մանր կենդանի **1000** խոշոր կենդանի **2000**

Համայնքի ղեկավար՝ Ս. Փիլոյան

ՍՍՐԱՇԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՈՒՂԱՄԱՍ 06801657

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,

29.նոյեմբերի. 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ 31

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Լոռու մարզի Սարահարթ համայնքապետարանի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական կազմը՝ավագանու 3 անդամ:

2.Հաստատել Լոռու մարզի Սարահարթի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3.Ուժը կորցրած ճանաչել Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու 2017թ ապրիլի 14-ի <<Համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական եվ անհատական կազմի մասին>> թիվ 11-Ա որոշումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Բարիկյան Հարություն			
Սահակյան Լյովա			
Քոթանջյան Վազգեն			
Բարիկյան Վահան			

Սարահարթ համայնքի ղեկավար՝ /Ա. Փիլոյան/

Հավելված՝

ՀՀ Լոռու մարզի Սարահարթի համայնքի

ավագանու 2018թ նոյեմբերի 29-ի 31 որոշման

Լոռու մարզի Սարահարթի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների անհատական կազմը

1.Բարիկյան Վահան

2.Հալաջյան Արթուր

3.Քոթանջյան Վազգեն

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք, ՀՀ Լոռու մարզ,

Գ.սարահարթ

29.նոյեմբերի.2018թ.

Որոշում 32

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԸ ՍՈՒՐԵՆ ՓԻԼՈՍՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանին հավանություն տվեց Սարահարթի միջնակարգ դպրոցը Սուրեն Փիլոսյանի անունով անվանակոչելուն, եթե նրա մատուցած ծառայությունները բավարարում են ՀՀ կառավարության կողմից սահմանված չափանիշներին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հալաջյան Արթուր			
Բարիկյան Հարություն			
Սահակյան Լյովա			
Քոթանջյան Վազգեն			
Բարիկյան Վահան			

Համայնքի ղեկավար Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,

29.նոյեմբերի. 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ 33

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Թույլատրել Սարահարթ համայնքում գտնվող համայնքային սեփականություն համարվող/ կադաստրի ծածկագիրը՝ 06-097-001-001/ մակերեսի չափը՝ 0.02հա, նպատակային նշանակությունը՝ <<Ցուքում>> կայանի տեղադրման, աճուրդ վաճառքի միջոցով օտարել:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հալաջյան Արթուր			+
Բարիկյան Հարություն		+	
Սահակյան Լյովա		+	
Քոթանջյան Վազգեն	+		
Բարիկյան Վահան		+	

Սարահարթ համայնքի ղեկավար /Ս. Փիլոյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,

03.դեկտեմբերի. 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ 29

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին >> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Սարահարթ համայնի ավագանու 2018թ նոյեմբերի 29-ի թիվ 31 որոշումը՝

1. Սարահարթ համայնքի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների կազմը՝

ա/ Փիլոյան Արտյոմ համայնքի ղեկավար

բ/ Խաչատրյան Անուշ մարզպետարանի ներկայացուցիչ

գ/ Թամարյան Դավիթ մարզպետարանի ներկայացուցիչ

դ/ Բաղդասարյան Վարդան մարզպետարանի ներկայացուցիչ

ե/ Բարիկյան Վահան ավագանու անդամ

զ/ Հալաջյան Արթուր ավագանու անդամ

է/ Քոթանջյան Վազգեն ավագանու անդամ

2. Ուժը կորցրած ճանաչել Սարահարթ համայնքի ղեկավարի 2017թ ապրիլի 28-ի թիվ 5 որոշումը:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք,

ՀՀ Լոռու մարզ, Գ.Սարահարթ

03.դեկտեմբերի .2018թ.

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ 21

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 16, 18 և 19 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետով

Կարգադրում եմ՝

Անվավեր ճանաչել 16, 09. 11.2018թ, 18, 15.11.2018թ, 19, 16.11.2018թ կարգադրությունները:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք,

ՀՀ Լոռու մարզ, Գ.Սարահարթ

03.դեկտեմբերի .2018թ.

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ 22

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՍՈՒՍԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի>> 85, 89-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Սարահարթ համայնքի բնակչուհի Սուսան Կիրակոսյանի դիմումը՝

Կարգադրում եմ՝

1.Սուսան Կիրակոսյանին ընդունել Սարահարթի համայնքապետարանում որպես համայնքի ղեկավարի տեղակալ 2018թ դեկտեմբերի 3-ից:

2.Սուսան Կիրակոսյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել 117 000 (մեկ հարյուր տասնյոթ հազար) դրամ:

3.Սուսան Կիրակոսյանի հետ կնքել անորոշ ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան